

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏ ԾԱՆԱԶՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ

2006 թ., դեկտեմբեր

Իրավական ուղեցույց

<<http://www.legalguide.am>>

Սույն վերլուծությունը կատարել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպությունը: Այս վերլուծությունը և նրանում արտահայտված կարծիքները հետապնդում են բացառապես կրթական և տեղեկատվական նպատակ: Սույն վերլուծությունում արտահայտված կարծիքները հանդիսանում են հեղինակին՝ Նարինե Գասպարյանին, և պարտադիր չէ որ համընկնեն «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության տեսակետների հետ:

Սույն վերլուծությունը մշակվել է «Հայաստանի և Ադրբեջանի փախստականների փաստաթղթերի փոխանակում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Դանիական փախստականների խորհրդի կողմից և իրականացվում «Մեր տունը Հայաստանն է» հասարակական կազմակերպության կողմից: «Իրավական ուղեցույց»-ը ներգրավվել է Ծրագրում սույն վերլուծությունը մշակելու նպատակով: «Իրավական ուղեցույց»-ը Հայաստանի Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը կոչված է բարձրացնել Հայաստանի բնակչության և այլ երկրների հայերի իրավունքների նկատմամբ հարգանքն ու մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների արդյունավետությունը՝ օրենքների կիրառման և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնելու միջոցով:

«Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն:

©2006 Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 4

ՄԱՍ I -- «ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏ ՃԱՆԱԶՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ» Ու ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ..... 7

Ա) Որպես իրավասություն կտ ճանաչվելու իրավունքը..... 7

Բ) Մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային փաստաթղթերով սահմանված՝ որպես իրավասություն ճանաչվելու իրավունքով երաշխավորված պաշտպանության շրջանակը..... 9

1.Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր..... 11

2.Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր..... 11

3.Յուրաքանչյուրի՝ որպես իրավասություն ճանաչվելու իրավունքի պաշտպանության հարցում պետությունների պարտավորությունների շրջանակը..... 18

ՄԱՍ II -- ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏ ՃԱՆԱԶՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ..... 21

1. «Փախստական» հասկացության սահմանումը..... 21

2. Փախստականների նկատմամբ վերաբերմունքի ոլորտի նվազագույն ստանդարտները. որպես իրավասություն ճանաչվելու իրավունքը 23

ՄԱՍ III. ՎԵՐՋԱԲԱՆ..... 34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ: ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքների կոնցեպցիան պատմության ընթացքում իր դրսևորումը գտել է տարբեր ձևերով: Մարդու իրավունքները ճանաչվել և/կամ պաշտպանվել են դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում: Մարդու իրավունքների ճանաչման և հռչակման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համարյա բոլոր ազգերի մոտ անհատի կամ մարդկանց խմբի իրավունքների ճանաչման անհրաժեշտությունը ծագել է մարդկանց առջև ծագած որոշակի բարդությունների արդյունքում: Այսպես, Աթենքում աթենացիները անհատի իրավունքները ճանաչեցին բռնապետությունից պաշտպանվելու համար, բայց նրանք օգտագործեցին ոչ թե «անհատների իրավունք» հասկացությունը, այլ սահմանեցին համապատասխան պարտականություններ:

Անհատի իրավունքների ճանաչումն ու բնորոշումը գնալով առավել կարևորություն էր ստանում՝ պետական մակարդակով մարդու իրավունքների ճանաչման և դրանց հետագա պաշտպանության համար համապատասխան երաշխիքներ սահմանելու տեսանկյունից: Տասնյոթերորդ և տասնութերորդ դարերում «բնական իրավունքների»¹ տեսությունը լուրջ տարածում գտավ, հատկապես շեշտը դնելով, այն հանգամանքի վրա, որ անհատները, լինելով բնական էակներ, ունեն իրավունքներ, որոնք չեն կարող խախտվել որևէ մեկի կամ որևէ հասարակության կողմից²: Բնական իրավունքների տեսությունը շատ երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հեղափոխությունների պատճառներից մեկը դարձավ: Ֆրանսիայում «Մարդու իրավունքները» հռչակվեցին Ազգային ժողովի կողմից Ֆրանսիական հեղափոխությունից հետո: «Մարդու իրավունքներ»-ում

1 «Բնական իրավունքների» տեսությունը ծագում է բնական օրենքի անտիկ և նախնադարյան տեսություններից, որի համաձայն մարդիկ, որպես բնության և աստծո ստեղծած էակներ, պետք է ապրեն և իրենց հասարակությունը կառուցեն բնության կամ աստծո սահմանած կանոնների և սկզբունքների հիման վրա:

2 Տե՛ս, օրինակ, Ռ. Թաք Բնական իրավունքների տեսությունները (1982 թվական), Լ.Լ Ուեիներթ, Բնական իրավունքը և Արդարադատությունը (1987 թվական):

անհատների իրավունքների ճանաչման հիմնական անհրաժեշտությունը կայանում էր այն հավատի մեջ, որ՝

«...մարդու իրավունքների անտեսումն ու դրանց նկատմամբ արհամարամքն ու վիրավորական վերաբերմունքը մարդկության դժբախտության ու կառավարությունների կոռումպացվածության միակ պատճառն են և հետևաբար ստիպում են պաշտոնական հռչակագրով սահմանել մարդու բնական, անօտարելի և անձեռնմխելի իրավունքները, որպեսզի սույն Հռչակագիրը՝ միշտ լինելով Սոցիալական մարմնի առջև, շարունակաբար հիշեցնի նրանց իրենց իրավունքների և պարտականությունների մասին ...»³.

Բացի «Մարդու իրավունքներ»-ում տեղ գտած հատուկ սահմանումներից, մի քանի դասական ձևակերպումներ են կատարվել նաև Իրավունքների Անգլիական Բիլլում (1689 թվական)⁴, Ամերիկայի Անկախության Հռչակագրում (1776 թվական)⁵, Մարդու և Քաղաքացու Իրավունքների մասին Ֆրանսիական Հռչակագրում (1789 թվական) և Միացյալ Նահանգների Սահմանադրության առաջին 10 Փոփոխություններում (1791 թվական)⁶:

Ինչ վերաբերում է միջազգային, այլ ոչ թե ազգային մակարդակում մարդու իրավունքների ճանաչմանը, ապա Հոլոքոստի դեպքերը, Նյուրնբերգի պատերազմի հանցագործությունների դատավարության արդյունքում բացահայտված փաստերը, Բաթան Մահվան մարշը, միջուկային պայթյունները, ինչպես նաև այլ աղետները, պատճառ հանդիսացան Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո մարդու իրավունքները միջազգային մակարդակով սահմանելու համար:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն (ՄԻՀՀ)⁷ առաջին անգամ համընդհանուր կերպով հռչակեց մարդու իրավունքներն ու ազատությունները: ՄԻՀՀ-ն առաջին միջազգային հռչակագիրն էր, որը բնորոշեց մարդու իրավունքները՝ հռչակելով, որ.

3 Մարդու իրավունքները, Մարդու և քաղաքացու իրավունքների մասին Հռչակագիրը, ընդունվել է 1789 թվականի օգոստոսի 26-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից, նախաբան
4 Իրավունքների Անգլիական Բիլլը, Սուբյեկտների իրավունքները և ազատությունները և Գահի ժառանգման կարգը սահմանող Ակտ, ընդունված 1689 թվականի դեկտեմբերի 16-ին
5 Ամերիկայի 13 Միացյալ Նահանգների միաձայն Հռչակագիրը, Կոնգրես 1776 թվական հուլիսի 4
6 Իրավունքների մասին Բիլլը, Սահմանադրության 1-10 փոփոխություններ, 1791 թվական
7 Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ընդունված և հաստատված Գլխավոր ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 A (III) Բանաձևով

«... Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է...»⁸:

ՄԻՅՅ-ն երաշխավորում է քաղաքական, քաղաքացիական և սոցիալական իրավունքներ և ազատություններ: ՄԻՅՅ-ն հռչակում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, առանց որևէ խտրականության: Բացի դրանից, ՄԻՅՅ-ն հռչակում է կյանքի, ազատության և անձի անձեռնմխելիության իրավունքը: ՄԻՅՅ-ի համաձայն, յուրաքանչյուր ոք ամենուր ունի իրավասություն ճանաչվելու, օրենքով հավասար պաշտպանվածություն ունենալու և անաչառ դատարանի կողմից արդար և հրապարակային դատաքնության իրավունք: Այն նաև երաշխավորում է այլ իրավունքներ և ազատություններ: ՄԻՅՅ-ն առաջին փաստաթուղթն էր, որ հանրնդհանուր կերպով ճանաչեց յուրաքանչյուր մարդու՝ որպես իրավասություն կտ ճանաչվելու իրավունքը:

ՄԻՅՅ-ի ընդունումից հետո մի շարք այլ միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ փաստաթղթեր ընդունվեցին, որոնցով հետզհետե ընդլայնվեց մարդու իրավունքների և ազատությունների և դրանց պաշտպանության համակարգերի ու երաշխիքների շրջանակը: Սույն վերլուծությունում կուսումնասիրվեն ՄԻՅՅ-ն ու մարդու իրավունքների միջազգային մի շարք այլ փաստաթղթեր յուրաքանչյուրի՝ որպես իրավասություն կտ ճանաչվելու իրավունքի կոնտեքստում:

⁸ Տե՛ս նույն տեղում, նախաբան

ՄԱՍ I – «ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏ ԾԱՆԱԶՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ» ՈՒ ԱՅՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա) Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը

Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը (հաճախ օգտագործվում է նաև «իրավասուբյեկտության ճանաչման իրավունք» տարբերակով) հիմնարար իրավունքներից մեկն է: Այն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար շատ կարևոր դեր և նշակություն ունի: Իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը պահանջում է յուրաքանչյուրի ճանաչումն միջազգային մակարդակով և կոնկրետ երկրի իրավական համակարգով՝ որպես պաշտպանվածություն ունեցող սուբյեկտի:

Այս իրավունքով սահմանված պաշտպանվածության լայն շրջանակը հնարավորություն է տալիս կարգավորել ոչ միայն մարդկանց միջև, այլ նաև նրանց՝ օրենքի առջև հավասարությանն առնչվող իրավունքները: Իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը ներառում է բազմաթիվ տարրեր և կարևոր իրավունքներ, ազատություններ ու պարտականություններ, որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում ստորև թվարկվածներով.

- ա) Կոնկրետ պետության իրավական համակարգով ճանաչման իրավունք - Կոնկրետ պետության իրավական համակարգով ճանաչվելու իրավունքը ներառում է համապատասխան իրավական դաշտի առկայություն, որով կապահովվի յուրաքանչյուրի՝ օրենքով պաշտպանված լինելու իրավունքը: Այստեղ կարևոր է համարվում այն, որ կոնկրետ պետության իրավական ակտերով ճանաչվի ցանկացած մարդ, անկախ իր իրավական կամ այլ կարգավիճակից և այդ ակտերով սահմանվի համապատասխան կարգավորում:*
- բ) Կոնկրետ պետության իրավական համակարգով և պրակտիկայում պաշտպանության իրավունք – Այս իրավունքը պահանջում է ոչ միայն իրավական դաշտի, որով կսահմանվի իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը, այլ նաև գործնականում պատշաճ համակարգերի առկայություն, որով կպաշտպանվի այդ իրավունքը:*
- գ) Ամենուր հավասարապես իրավական պաշտպանություն ստանալու իրավունք—Կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը երաշխավորում է*

պաշտպանություն ոչ միայն այն երկրում, որի քաղաքացին է հանդիսանում կոնկրետ անձը (երբ կոնկրետ երկրի քաղաքացիները կարող են որոշակի առավելություններ և արտոնություններ ունենալ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ), այլ նաև այդ երկրի սահմաններից դուրս: Այսպիսով, կոնկրետ պետության իրավական համակարգով պետք է պաշտպանություն սահմանվի բոլորի, ներառյալ քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ որպես «իրավասուբյեկտ»:

- դ) *Օրենքի առաջ հավասարության իրավունք* – Օրենքը բոլորի համար պետք է երաշխավորի նույն չափով պաշտպանություն և այն պետք է միևնույն կիրառությունն ունենա բոլորի նկատմամբ: Այս իրավունքը, ի թիվս այլ երաշխիքների, երաշխավորում է առանց խտրականության օրենքով պաշտպանված լինելու իրավունքը:
- ե) *Օրենքով պաշտպանված լինելու իրավունք* – Այս իրավունքը ներառում է մի շարք այլ իրավունքներ և ազատություններ, այդ թվում դատարանների և տրիբունալների առջև հավասարության իրավունքը և օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի և տրիբունալի կողմից արդարացի և հրապարակային դատական քննության իրավունքը:
- զ) *Ներպետական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունք* – Հատկանշական է այն, որ յուրաքանչյուր մարդու՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը պահանջում է այդ իրավունքի իրականացում ամենուր, այն է՝ ոչ միայն այն երկրում որտեղ ապրում է մարդը, այլ նաև այդ պետության սահմաններից դուրս:
- է) *Հավասարության իրավունք* – Այս իրավունքը համարվում է յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի հիմնական տարրերից մեկը, քանի որ այն ընկած է վերջինիս հիմքում, և այլ իրավունքներ և ազատություններ:

Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային մի շարք փաստաթղթերով, այդ թվում ՄԻՀՀ-ով, Քաղաքացիական և քաղաքական

իրավունքների մասին միջազգային դաշնագրով⁹ (ԲՔԻՄԴ) և այլ փաստաթղթերով, ինչպես նաև Եվրոպական և այլ երկրների Սահմանադրություններով իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը սահմանված է որպես հիմնարար իրավունք:

Բ) Մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային փաստաթղթերով սահմանված՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքով երաշխավորված պաշտպանության շրջանակը

Սույն վերլուծության նպատակների համար կուսուճնասիրվեն բացառապես մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային ընտրված փաստաթղթեր՝ յուրաքանչյուրի իրավասուբյեկտության ճանաչման իրավունքի կոնտեքստում, սակայն որևէ անդրադարձ չի կատարվի իրավասուբյեկտության ճանաչման իրավունքի՝ Միջազգային մարդասիրական իրավունքով սահմանված կարգավորումներին: Միաժամանակ, առավել մանրամասն կներկայացվեն փախստականների՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի իրականացման առանձնահատկություններն ու երաշխիքները:

Ստորև բերված *Աղյուսակ 1-ում* ներկայացված են մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային այն փաստաթղթերը, որոնցով երաշխավորվում է յուրաքանչյուրի՝ իրավասուբյեկտության ճանաչման իրավունքի պաշտպանությունը:

Աղյուսակ 1

<i>Յ/Գ</i>	<i>Մարդու իրավունքների պաշտպանության մասին փաստաթղթեր</i>	<i>Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի պաշտպանությունը սահմանող հոդվածները</i>
1.	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր	Հոդված 1 Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով:

9 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ընդունվել է բաց է հայտարարվել վավերացման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Թիվ 2200A (XXI) Բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976 թվականին համաձայն հոդված 49-ի

		...
2.	Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիր	Հոդված 6 Յուրաքանչյուր ոք ամենուր իրավունք ունի ճանաչվելու որպես իրավասուբյեկտ:
3.	Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիր	Հոդված 13 (1) Յուրաքանչյուր ոք ունի տվյալ պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: (2) Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունք:
4.	Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիր	Հոդված 15 (1) Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք: (2) Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր քաղաքացիությունից կամ քաղաքացիությունը փոխելու իրավունքից:
5.	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	Հոդված 12 1. Որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից մեկնելու իրավունք: 3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որևէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության, կամ էլ այլոց իրավունքների և

		ազատությունների պաշտպանության համար, և համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:
		4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:
6.	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	Հոդված 16 Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք:

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

ՄԻՅՀ-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, այդ թվում վերջինիս մասը կազմող տարբեր իրավունքները, ներառված է ՄԻՅՀ-ի մի քանի հոդվածներում: ՄԻՅՀ-ի 6-րդ հոդվածը սահմանում է հիմնական երաշխիքներ յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի պաշտպանության համար: 15-րդ հոդվածը անդրադառնում է առավել կոնկրետ իրավունքների և ազատությունների, որոնք որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի մասն են կազմում: ՄԻՅՀ-ի 13-րդ հոդվածը, մասնավորապես, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ տվյալ պետության սահմաններում տեղաշարժվելու և բնակության իրավունքը, ցանկացած պետությունից, այդ թվում՝ սեփական երկրից մեկնելու և իր երկիրը վերադառնալու իրավունքը: Ակնհայտ է, որ 13-րդ հոդվածը մանրամասնում է ՄԻՅՀ-ի 6-րդ հոդվածով սահմանած՝ ամենուր որպես իրավասուբյեկտ ճանաչվելու յուրաքանչյուրի իրավունքը, քանի որ այն երաշխավորում է ազատ տեղաշարժվելու և բնակության իրավունքը: 15-րդ հոդվածը նույնիսկ ավելի է առաջ գնում՝ հստակ նշելով, որ յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք և որ ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

2. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՔՔԻՄԴ-ի համապատասխան հոդվածների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՔՔԻՄԴ-ի 16-րդ հոդվածը նույն բովանդակությունն ունի ինչ որ ՄԻՅՀ-ի 6-րդ հոդվածը և սահմանում է նույն երաշխիքներն ու պաշտպանությունը, այն է՝ յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը: Սակայն ՔՔԻՄԴ-ի 12-րդ

հողվածը առավել մանրամասն է: Այն հստակորեն սահմանում է, որ որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք և բնակության վայր ընտրելու ազատություն և նույնիսկ մեկ քայլ առաջ գնալով սահմանում է այն պայմանները, որոնց առկայության դեպքում այս իրավունքները կարող են ենթարկվել սահմանափակումների: Համաձայն հողված 12-ի այդ պայմանները պետք է լինեն օրենքով նախատեսված, անհրաժեշտ ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, բնակչության առողջությունը կամ բարոյականությունը, կամ այլոց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար: Այդ հողվածը նաև սահմանում է, որ ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

Հատկանշական է, որ ՔԲԻՄԴ-ով երաշխավորված յուրաքանչյուր մարդու՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի ապահովումից շեղումն բացառվում է համաձայն ՔԲԻՄԴ-ի 4-րդ հողվածի, որը սահմանում է.

«1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների...»

2. Սույն դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 [ամենուր որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք] և 18-րդ հողվածներից որևէ շեղում կատարելու համար»:¹⁰

Արտակարգ դրության ժամանակ պետության գործողությունները կարող են ազդել ՔԲԻՄԴ-ով երաշխավորված բոլոր իրավունքների և ազատությունների վրա: Պետությունը դրական պարտավորություն ունի պաշտպանել իր իրավագործության ներքո գնտվող յուրաքանչյուր մարդու իրավունքները: Մարդու իրավունքների կոմիտեն¹¹ (ՄԻԿ) պարզաբանել է, որ ՔԲԻՄԴ-ը չի կարող մեկնաբանվել կամ կիրառվել այլ կերպ, միայն այն պատճառով, որ երկրում խռովություն է տիրում: ՄԻԿ-ն հստակ սահմանում է, որ ՔԲԻՄԴ-ի 4-րդ հողվածի դրույթներին լիովին համապատասխանելու համար անհրաժեշտ է պաշտպանել մարդու իրավունքներն՝ անկախ արտակարգ դրության առկայության: Մարդու իրավունքներից ցանկացած շեղում պետք է դիտարկվել որպես բացառություն և ժամանակավոր բնույթ կրող գործողություն:

¹⁰ Տե՛ս ՔԲԻՄԴ, 4-րդ հողվածի 1-ին և 2-րդ կետեր:

¹¹ Մարդու իրավունքների կոմիտեն անկախ փորձագետներից կազմված մի մարմին է, որը հսկում է Դաշնագրի մասնակից պետությունների կողմից ՔԲԻՄԴ-ի կատարումը: URL:<http://www.ohchr.org/english/bodies/hrc/index.htm>

Ստորև բերված Աղյուսակ 2-ը մասնավորեցնում է ՄԻՀՀ-ով և ՔՔԻՄԴ-ով երաշխավորված բոլոր իրավունքների սահմանափակման հնարավոր շրջանակը.

Աղյուսակ 2

ՄԻՀՀ-ով և ՔՔԻՄԴ-ով ճանաչվող իրավունքների սահմանափակումները		
Միջազգային պայմանագրի անվանումը	Արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղումը	Իրավունքներ, որոնք ենթակա չեն շեղման
Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագիր	Չի պարունակում ոչ մի դրույթ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու մասին	Չի պարունակում ոչ մի դրույթ այն իրավունքների մասին, որոնք ենթակա չեն շեղման
Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր	Հոդված 4 (1) Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որ հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն	Հոդված 4 (2) սահմանում է այն իրավունքները, որոնցից շեղում չի կարող կատարվել. § Կյանքի իրավունք (բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի), § Խոշտանգումների արգելում, § Ստրկության արգելում, § պաշտպանություն հետադարձ ուժով քրեական պատիժների կիրառումից, § Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք, § Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, § Բացառապես

	<p>բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով: ...</p>	<p>պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով ազատագրված բացառում:</p> <p>Յոդված 5 (2) –ը սահմանում է.</p> <p>... (2) Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետություն չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որևէ հիմնարար իրավունք ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:</p>
--	--	---

Ըստ ՄԻԿ-ի Մեկնաբանության հիմնավորված չի համարվի ՔՔԻՄԴ-ով ամրագրված այն պարտավորություններից շեղումը՝ որը կհիմնավորվի իրավիճակի լրջությամբ, սակայն դրա հետևանքով կանտեսվեն թվարկված իրավունքները:

Չնայած նրան, որ ՔՔԻՄԴ-ի 4-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է այն իրավունքները, որոնցից շեղում չի կարող կատարվել, 2001 թվականի հուլիսին ՄԻԿ-ն իր *Ընդհանուր Մեկնաբանություն 29-ով* ճանաչեց, որ ՔՔԻՄԴ-ի 4-րդ հոդվածի 2-րդ մասով թվարկված իրավունքներին պետք է ավելացնել մի շարք այլ իրավունքներ՝ մասնավորապես խտրականության արգելման, սովորութային իրավունքով կամ միջազգային մարդասիրական իրավունքով ամրագրված պարտավորությունները կատարելու նպատակով: Այդ իրավունքները ներառում են հետևյալը.

- Պատանդ վերցնելն արգելելը,
- Մարդկանց բռնի տեղահանումն արգելելը,
- Անչափահասների իրավունքները,
- Ցանկացած կալանավորվածի հանդեպ իր արժանապատվությունը հարգող վերաբերմունքի ցուցաբերումը,
- Արդար դատաքնության հիմնարար տարրերը, ինչպես օրինակ անմեղության կանխավարկածը, մասնավորապես, երբ առկա է մահապատիժ սահմանող իրավական նորմ,
- Ազատությունից կամայականորեն զրկելը:

2.1. «Յուրաքանչյուր ոք» հասկացությունը

ՄԻՅՅ-ով և ՔՔԻՄԴ-ով երաշխավորված որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի պաշտպանության շրջանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկու փաստաթղթերով էլ պաշտպանվում է յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը (ՄԻՅՅ-ի 6-րդ հոդված և ՔՔԻՄԴ-ի 16-րդ հոդված):

Միավորված ազգերի կազմակերպության Հռչակագիրն այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են¹², սահմանում է.

հաշվի առնելով, որ.

...

«...յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը, որ բոլորը հավասար են օրենքի առաջ և առանց որևէ խտրականության ունեն օրենքով պաշտպանվելու հավասար իրավունք, ...»

Գիտակցելով, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի Անդամ Պետությունները պարտավորություն են ստանձնում՝ երաշխավորելու, որ այս Դաշնագրերով ճանաչված իրավունքները կապահովվեն առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից,

¹² Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Հռչակագիրն այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են: Ընդունված Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի դեկտեմբերի 13-ի 0/144 Բանաձևով:

Գիտակցելով, որ զարգացող կապի և պետությունների միջև ընկերական և բարիդրացիական հարաբերությունների զարգացման հետ զուգընթաց մեծանում է այն այն անձանց թիվը, ովքեր ապրում են այն պետությունում, որի քաղաքացի չեն հանդիսանում,

...

Ընդունելով, որ միջազգային փաստաթղթերով ամրագրված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը, պետք է նաև երաշխավորվի այն անձանց համար, ովքեր չեն համարվում այն երկրի քաղաքացի, որտեղ ապրում են...»¹³:

Նույն ՅՈւՆԵՍԿՕ-ի համաձայն «օտարերկրացի» է համարվում այն անձը, ով չի հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ գտնվում է¹⁴: Այս սահմանումը բավականին ընդգրկում է, և այն հստակ սահմանազատում է անցկացնում կոնկրետ պետության քաղաքացու և մնացած բոլոր անձանց, ներառյալ փախստականների, միգրանտների և այլ անձանց միջև: ՅՈւՆԵՍԿՕ-ն հստակորեն սահմանում է օտարերկրացիների իրավունքներն ու ազատությունները, սակայն շատ դեպքերում այն որոշ կարգերի ու կանոնների մշակումը վերապահում է պետություններին:

Ավելին, ՄԻԿ-ն իր *Ընդհանուր Մեկնաբանություն 15-ով* հստակ սահմանում է, որ օտարերկրացիները պետք է ապահովված լինեն Դաշնագրով ամրագրված իրավունքներով այն պահից սկսած, երբ նրանց թույլատրվում է մուտք գործել ՔՔԻՄԴ-ի¹⁵ մասնակից որևէ պետության տարածք: ՄԻԿ-ն, այնուհետ թվարկում է այդ իրավունքները, որոնք ի թիվս այլ իրավունքների և ազատությունների ներառում են *որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը*:

Հատկանշական է այն, որ իրավասուբյեկտության ճանաչման իրավունքը ներառում է ոչ միայն կոնկրետ իրավունքներ, այլ նաև որոշակի պարտավորություններ ինչպես մարդկանց, այնպես էլ պետությունների համար: Յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի իրականացման հարցում շատ կարևոր են պետությունների ստանձնած պարտավորությունները: Ստորև կներկայացվի պետությունների

13 Տե՛ս նույն տեղում, Նախաբան

14 Տե՛ս նույն տեղում, հոդված 1

15 Տե՛ս Մարդու իրավունքների կոմիտեի «Դաշնագրի համաձայն օտարերկրացիների կարգավիճակի մասին»

Ընդհանուր Մեկնաբանություն 15, 11/04/86: Ընդունվել է 1986 թվականին քսանյոթերորդ նստաշրջանում

պարտավորությունների շրջանակը յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչելու իրավունքի ապահովման բնագավառում:

3. Յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի պաշտպանության հարցում պետությունների պարտավորությունների շրջանակը

ՄԻՅՅ-ով և ՔՔԻՄԴ-ով երաշխավորված յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի բաղկացուցիչ տարրերի և դրա մասը կազմող այլ իրավունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն նաև ներառում է որոշակի պարտավորություններ Անդամ Պետությունների համար:

ՄԻՅՅ-ի նախաբանում Գլխավոր ասամբլեան հռչակում է.

«... մշտապես մտապահելով սույն հռչակագիրը՝ ձգտի ուսման և կրթության միջոցով քաջալերել հարգանքն այս իրավունքների և ազատությունների նկատմամբ և ազգային և միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովել դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների և թե՛ դրանց իրավագործության ներքո գնտվող տարածքների ժողովուրդների կողմից:»¹⁶

ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածը նմանապես անդամ պետությունների համար սահմանում է որոշակի պարտավորություններ՝ կապված կոնկրետ անդամ պետության իրավագործության ներքո գնտվող յուրաքանչյուրի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը երաշխավորելու առումով: ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածը հստակ սահմանում է.

«1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

2. Եթե դա դեռևս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է սահմանադրական ընթացակարգերին և սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ քայլեր ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցառումներ ընդունելու համար, որոնք կարող են

¹⁶ Տե՛ս ՄԻՅՅ, նախաբան

անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

(a) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անգամ եթե այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձիք,

(b) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները,

(c) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:»¹⁷

Յուրաքանչյուրի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի պատշաճ իրականացումն ապահովելու համար պետությունները պարտավորվում են ընդունել համապատասխան իրավական ակտեր և ապահովել այդ իրավունքի իրականացման համար պատշաճ մեխանիզմներ: Այդ իրավական ակտերն ու մեխանիզմները պետք է համապատասխանեն միջազգայնորեն ընդունված ստանդարտներին, ինչպես նաև ապահովեն կոնկրետ պետությունում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ամրագրված՝ ինչպես կոնկրետ պետության քաղաքացիների, այնպես էլ այդ պետության քաղաքացի չհանդիսացող անձանց իրավունքներն ու ազատությունները:

Մի շարք պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

«Օտարերկրացիներին ընդունող պետության կողմից նրանց նկատմամբ վերաբերմունքի առնչությամբ առկա է ընդունված երկու մոտեցում. այն է՝

17 Տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 2

ազգային կամ հավասարության սկզբունքի վրա հիմնված վերաբերմունք և միջազգային նվազագույն ստանդարտների վրա հիմնված վերաբերմունք».¹⁸

Ազգային կամ հավասարության սկզբունքի վրա հիմնված վերաբերմունքը ընդունվում և կիրառվում է շատ զարգացող երկրների կողմից, ըստ որի, կոնկրետ պետության քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող անձիք պետք է ունենան նույն պաշտպանվածության աստիճանը և պոզիտիվ կամ նեգատիվ խտրականություն չպետք է կիրառվի օտարերկրացիների նկատմամբ: Այնինչ, միջազգային նվազագույն ստանդարտների վրա հիմնված վերաբերմունքի սկզբունքի համաձայն, օտարերկրացիներին պետք է տրվեն առավելություններ և, հետևաբար, անհարժեշտության դեպքում կարող են կիրառվել պոզիտիվ խտրականության նորմեր:

Պետությունները մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերով ստանձնած որոշակի պարտավորություններ ունեն և նրանք պետք է ապահովեն, որ այդ փաստաթղթերով երաշխավորված իրավունքները հավասարապես կիրառվեն իրենց իրավագործության տակ գտնվող յուրաքանչյուր մարդու նկատմամբ: Սույն վերլուծությունում ուսումնասիրված մարդու իրավունքների պաշտպանության մասին միջազգային փաստաթղթերով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք, ներառյալ փախստականները, ունեն միևնույն իրավունքներն ու ազատությունները: Հետևաբար, պետությունները, մի կողմից մարդու իրավունքների պաշտպանության և փախստականների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի համաձայն պետք է կատարեն իրենց պարտավորություններն օտարերկրացիների, ներառյալ փախստականների հանդեպ, իսկ մյուս կողմից կատարեն ազգային անվտանգության, սոցիալական և տնտեսական շահերի ոլորտում իրենց ունեցած պարտավորությունները:

¹⁸ Տե՛ս Ռոնա, Կ, Մ. Սմիթ, «Միջազգային մարդու իրավունքների վերաբերյալ դասագիրք», 2-րդ հրատարակություն, մաս 2.4.2, էջ 9

ՄԱՍ II -- ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. «Փախստական» հասկացության սահմանումը

20-րդ դարի սկզբներից ի վեր փախստականների հարցի կարևորությունը անհանգստության և ուսումնասիրությունների կենտրոնում է եղել¹⁹: Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո փախստականների խնդիրները բարձրացրեցին հրատապ լուծումներ պահանջող բազմաթիվ հարցեր և հետևաբար, անհրաժեշտություն առաջացավ ընդունել լրացուցիչ միջազգայնորեն ճանաչվող պաշտպանության համակարգեր:

1950թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի Բանաձևի արդյունքում 1951թ. հունիսի 28-ին Միավորված ազգերի կազմակերպությունն ընդունեց Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, որն ուժի մեջ մտավ 1954թ. ապրիլի 21-ին: Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի ընդունմամբ սահմանվեց փախստականի իրավական կարգավիճակն ու բնորոշումը, որով նաև փոխարինվեց նախկին փորձը, այն է՝ կոնկրետ փախստականների հարցերի կապակցությամբ *Ad Hoc* Համաձայնագրեր կնքելը, երբ փախստականների բնորոշումն ու իրավական կարգավիճակը որոշվում էր հաշվի առնելով կոնկրետ Երկրի և իրավիճակի առանձնահատկությունները: Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի (փոփոխված 1967թ.-ին ընդունված կից Արձանագրությամբ) համաձայն փախստական է համարվում այն անձն, ով.

«մինչև 1951թ. հունվարի 1-ը տեղի ունեցած իրադարձությունների և ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քաղաքական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ, նման երկյուղի պատճառով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով

¹⁹ Տե՛ս օրինակ 1951 թվականի կոնվենցիայի համաձայն Փախստականի կարգավիճակը սահմանելու ընթացակարգերի ու չափանիշների մասին Ղասազիթը: HCR/IP/4/Eng/REV.1, Ժնև, 1992թ. հունվար, ՄԱԿ-ի ՓՀԳՀ, 1979, մաս 1

գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է, կամ նման երկյուղի պատճառով, չի ցանկանում վերադառնալ այնտեղ:»²⁰

Ներկայումս թվով 146 պետություններ ստորագրել են 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և/կամ դրան կից 1967 թվականի Արձանագրությունը և, հետևաբար, այդ պետություններն ընդունում են այն անձանց, ովքեր ընկնում են «փախստական» հասկացության սահմանման տակ՝ ինչպես սահմանված է 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով²¹: 1951 թվականին, երբ ընդունվեց ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան, ամբողջ աշխարհով մեկ կային մոտ մեկ միլիոն փախստականներ²²: 2005 թվականի դրությամբ Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ-ի ՓՅԳՅ)²³ գրասենյակի տվյալներով կային թվով ինը միլիոն հինգ հարյուր հիսուն ինը հազար հարյուր (9,559,100) փախստականներ: Միևնույն ժամանակ ՄԱԿ-ի ՓՅԳՅ-ի համաձայն 2006 թվականի սկզբի դրությամբ.

«... համաշխարհային մակարդակով փախստականների թիվը ինը միլիոն հինգ հարյուր հազարից իջել է ութ միլիոն չորս հարյուր հազարի, որը 1980 թվականից մինչ օրս գրանցված փախստականների ամենացածր թիվն է: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ անցյալ չորս տարիների ընթացքում առավել քան վեց միլիոն փախստականներ (որոնցից երկու երրորդը աֆղաններ են) վերադարձել են իրենց քաղաքացիության երկրներ»:»²⁴

Սակայն, չնայած նախորդ տարիների համեմատության փախստականների թվի նվազման դրական տեղեկանքի, նույնիսկ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի ընդունումից հիսունհինգ տարի անց, փախստականների խնդիրները դեռ բավականին արդիական են, քանի որ փախստականները դեռևս շարունակում են բախվել այնպիսի հարցերի հետ, որոնք բարելավման կարիք ունեն և նրանց պաշտպանության մեխանիզմները ամրապնդման անհրաժեշտություն ունեն:

20 Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, ընդունվել է 1951 թվականի հուլիսի 28-ին Գլխավոր ասամբլեայի 1950 թվականի դեկտեմբերի 14-ի 429 (V) Բանաձևի հիման վրա: Ուժի մեջ է մտել 1954 թվականի ապրիլի 22-ին 43-րդ հոդվածի հիման վրա: հոդված 1

21 Տե՛ս URL: <http://www.unhcr.org>

22 Տե՛ս Ռոնա Կ. Մ. Սմիթ , Միջազգային մարդու իրավունքների մասին դասագիրքը, 2-րդ հրատարակություն, մաս 222.5.1., էջ 356

23 Տե՛ս ՄԱԿ-ի ՓՅԳՅ, Փախստականների թիվը, 2006 թվականի հրատարակություն

URL: <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/basics/opendoc.htm?tbl=BASICS&id=3b028097c>

24 Տե՛ս նույն տեղում

«Հյուսիսային Ռայթս Վոչ» (Human Rights Watch) կազմակերպության կատարած ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ.

« Փախստականների համաշխարհային ճգնաժամը ազդում է գրեթե բոլոր մայրցամաքների ու պետությունների վրա: 2001 թվականին փախստականների 78 տոկոսը 10 վայրերից էին, դրանք են՝ Ավդանստանը, Անգոլան, Բիրման, Բուրունդին, Կոնգո-Կինշասան, Էրիթրիան, Իրաքը, Պաղեստինյան տարածքները, Սոմալին և Սուդանը: Պաղեստինցիները աշխարհի ամենահին և թվով ամենաշատ փախստականներն են և կազմում են փախստականների ընդհանուր թվի ավելի քան մեկ քառորդը: Ասիայում փախստականները կազմում են փախստականների ընդհանուր թվի 45 տոկոսը, որին հաջորդում են Աֆրիկան (30 տոկոս), Եվրոպան (19 տոկոս) և Հյուսիսային Ամերիկան (5 տոկոս):»²⁵

Փախստականները, ովքեր շատ հաճախ պարտադրված են լինում լքել իրենց տները և երկրները առանց իրենց անձը, անունն ու ազգությունը հաստատող որևէ փաստաթղթի և նույնիսկ առանց նվազագույն անձնական օգտագործման իրերի, պետք է արժանանան հատուկ ուշադրության և խնամքի: Ստորև բերված են փախստականների նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ միջազգայնորեն ընդունված նվազագույն ստանդարտները:

2. Փախստականների նկատմամբ վերաբերմունքի ոլորտի նվազագույն ստանդարտները. որպես հրավասուլյելտ ճանաչվելու հրավունքը

ՄԱԿ-ի ՓՅԳՅ-ի Գործադիր Կոմիտեի²⁶ ընդունած ՄԱԿ-ի ՓՅԳՅ-ի և կառավարությունների գործունեության հիմնաքարը հանդիսացող ստանդարտները, որոնք կոչված են պաշտպանելու փախստականների իրավունքները, ի թիվս այլ դրույթների, ներառում են փախստականների իրավունքների վերաբերյալ դրույթներ, դրանք են՝

- ա) Իրականացնել միջազգայնորեն ճանաչված հիմնարար քաղաքացիական իրավունքներ, մասնավորապես այն իրավունքները, որոնք ամրագրված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, և

²⁵ Տե՛ս Հյուսիսային Ռայթս Վոչ (Human Rights Watch), Փախստականները,

URL: http://hrw.org/doc/?t=refugees&document_limit=0,2

²⁶ Գերագույն հանձնակատարի ծրագրի Գործադիր կոմիտե, Եզրակացություն 22 (XXXII, 1981) «Ապաստան հայցողների պաշտպանությունը մեծ թվով ապաստան հայցողների մուտքի դեպքում», «Փախստականների պաշտպանությունը միջազգային մակարդակով» թեմայով, ընդունված ՄԱԿ-ի ՓՅԳՅ-ի ծրագրի Գործադիր կոմիտեի կողմից: U.N. Doc. HCR/IP/2/Eng/REV.1994

- բ) Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք ունենալը, ներառյալ դատարան և այլ համապատասխան վարչական մարմիններ ազատորեն դիմելու իրավունքի իրականացումը:

Առաջին ստանդարտը հիմնարար նշանակություն ունի, որով յուրաքանչյուր անձի, ներառյալ փախստականների համար երաշխավորվում է միջազգայնորեն ճանաչված իրավունքների և ազատությունների իրականացումը: Այս ստանդարտը կոչված է ապահովել, որ փախստականները արժանանան համապատասխան վերաբերմունքի և ստանան պատշաճ պաշտպանություն: Ստորև մանրամասն անդրադարձ կկատարվի թե՛ առաջին և թե՛ երկրորդ ստանդարտներին:

ա) Միջազգայնորեն ճանաչված հիմնարար քաղաքացիական իրավունքների իրականացումը

Հիմնարար քաղաքացիական իրավունքներն ամրագրված են մի շարք միջազգային պայմանագրերում, որոնցով երաշխավորվում է քաղաքացի հանդիսացող և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ հավասար վերաբերմունքը: Ստորև ներկայացված են միջազգային փաստաթղթերի համապատասխան դրույթները.

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը

Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետը²⁷, որով ամրագրվում են Միավորված ազգերի կազմակերպության նպատակները, հստակորեն ընդգծում է բոլորի հավասար լինելու հանգամանքը, նշելով.

«...իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրները լուծելու և քոլոր անձանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք խրախուսելու

27 Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն: Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը ստորագրվել է 50 անդամ պետությունների կողմից Սան Ֆրանցիսկոյում Միավորված ազգերի կազմակերպության կոնֆերանսում, 1945 թվականի հունիսի 26-ին: Այն ուժի մեջ է մտել 1945 թվականի հոկտեմբերի 24-ին հինգ հիմնադիր անդամների՝ Չինաստանի Հանրապետության, Ֆրանսիայի, Խորհրդային միության, Միացյալ Թագավորության և Միացյալ Նահանգների, և մնացած անդամների մեծամասնության կողմից վավերացվելուց հետո

համար, առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնից, և»:²⁸

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

ՄԻՅՅ-ի 2-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ.

«(1) Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման, այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ: ...»:²⁹

Այս հոդվածը նշված իրավունքներն ու ազատությունները վերապահում է յուրաքանչյուրին և հետևաբար պաշտպանում է բոլոր մարդկանց, ներառյալ փախստականներին, ռասայական և այլ խտրականությունից: Հոդվածում օգտագործված «ինչպիսիք են» արտահայտությունը հուշում է, որ թվարկված ցանկը սպառնիչ չէ, և հստակ է այն հանգամանքը, որ կողմնորոշիչը այստեղ «առանց որևէ տարբերակման» արտահայտությունն է:

Այնուհետ, ՄԻՅՅ-ի 15-րդ հոդվածը սահմանում է.

«(1) Յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք:

(2) Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր քաղաքացիությունից, կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:»³⁰

ՄԻՅՅ-ի 14-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է.

«(1) Յուրաքանչյուր ոք ունի հետապնդումից այլ երկրներում ապաստան հայցելու և դրանից օգտվելու իրավունք: ...»³¹

Այս նորմի առավել արդյունավետ կիրառությունն ապահովելու նպատակով Գլխավոր Ասսամբլեան իր 428(V) Բանաձևով³² կոչ է անում

28 Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, 1-ին հոդվածի 3-րդ կետ

29 Տե՛ս ՄԻՅՅ, 2-րդ հոդվածի 1-ին կետ

30 Տե՛ս նույն տեղում, 15-րդ հոդված

31 Տե՛ս ՄԻՅՅ, 14-րդ հոդվածի 1-ին կետ

32 Միավորված ազգերի կազմակերպություն, Գլխավոր ասսամբլեա, Բանաձև Թիվ 428 (V): Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունը, ընդունվել է 1950 թվականի դեկտեմբերի 14-ին, հինգերորդ նստաշրջանում

URI: <http://daccessdds.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/060/26/IMG/NR006026.pdf?OpenElement>

պետություններին համագործակցել Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հետ իր գործառույթներն իրականացնելու հարցում *inter alia* «փախստականներին ընդունելով իրենց տարածք...»³³:

Ի լրացումն վերը նշվածի ՄԻԿ-ն իր *Ընդհանուր Մեկնաբանություն 15-ով* սահմանել է ՔՔԻՄԴ-ով ամրագրված օտարերկրացիների, այդ թվում նաև փախստականների իրավունքները: ՄԻԿ-ն նշում է, որ.

*«1. [Դաշնագրի] մասնակից պետություններն իրենց ներկայացրած հաշվետվություններում հաճախ հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ապահովի «իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց» (2-րդ հոդվածի 1-ին կետ) Դաշնագրով ճանաչված իրավունքները: Ընդհանուր առմամբ Դաշնագրով ամրագրված իրավունքները կիրառելի են բոլորի նկատմամբ, անկախ նրա ազգությունից և քաղաքացիություն չունենալու հանգամանքից»:*³⁴

Քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները պաշտպանվում են մի շարք այլ միջազգային փաստաթղթերով, որոնք սահմանում են հավասարության և խտրականության արգելման սկզբունքները: Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունն, օրինակ, 1-ին հոդվածի 3-րդ կետում ներառում է խտրականության արգելման մասին դրույթ, որը սահմանում է, որ Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկն է զարգացնել և խրախուսել.

*«... մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը յուրաքանչյուրի համար՝ առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնից»:*³⁵

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր

ՔՔԻՄԴ-ի 2-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է.

«(1) Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով

33 Տե՛ս նույն տեղում, կետ 2 (c)

34 Տե՛ս Մարդու իրավունքների Կոմիտեի Ընդհանուր մեկնաբանություն 15-ը: (Քսանյութերորդ նստաշրջան, 1986թ), U.N. Doc. HRI\GEN\1\Rev.1 at 18 (1994), մաս 1

35 Տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը, 1-ին հոդվածի 3-րդ կետ

ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթունից: ...».³⁶

ՔՔԻՄԴ-ում առկա են մի քանի դրույթներ միայն, որոնք անդրադառնում են քաղաքացիների իրավունքներին, կամ այլ կերպ սահմանազատում են մտցնում կոնկրետ պետության քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց միջև: ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածը հստակորեն սահմանում է քաղաքացիների քաղաքական իրավունքները: Այդ հոդվածը սահմանում է բացառապես կոնկրետ մասնակից պետության քաղաքացի հանդիսացող անձանց իրավունքներն ու ազատությունները: Այնուհետ ՔՔԻՄԴ-ի 13-րդ հոդվածով սահմանվում է օտարերկրացիների որոշ իրավունքներ և ազատություններ: Այն մասնավորապես սահմանում է.

«Սույն Դաշնագրի մասնակից որևէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարում օրենքին համապատասխան կայացված որոշման, և եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք և այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջև ներկայացվելու իրավունք».³⁷

ՔՔԻՄԴ-ով ամրագրված օտարերկրացիների իրավունքներն ու երաշխիքները մեկնաբանվում են ՄԻԿ-ի կողմից իր *Ընդհանուր Մեկնաբանություն 15-ում*:³⁸

Սարդու իրավունքների կոմիտեն, իր *Ընդհանուր Մեկնաբանություն 15-ում* վերահաստատում է, որ.

«...ընդհանուր սկզբունքն այն է, որ Դաշնագրով սահմանված յուրաքանչյուր իրավունք պետք է առանց խտրականության

³⁶ Տե՛ս ՔՔԻՄԴ, 2-րդ հոդվածի 1-ին կետ

³⁷ Տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 13

³⁸ Տե՛ս Սարդու իրավունքների կոմիտեն, Ընդհանուր մեկնաբանություն 15, Դաշնագրի համաձայն օտարերկրացիների կարգավճակը, (Քսանյոթերորդ նստաշրջան, 1986թ.), U.N. Doc. HR\GEN\1\Rev.1 (1994).

երաշխավորվի ինչպես քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրացիներին:»³⁹

Օտարերկրացիները.

«...Դաշնագրով երաշխավորված իրավունքներն իրականացնելիս 2-րդ հոդվածով սահմանված կարգով օգտվեն խտրականության արգելման ընդհանուր պահանջներից: Այս երաշխիքը ապահովվում է ինչպես օտարերկրացիների այնպես էլ քաղաքացիների համար:»⁴⁰

Միաժամանակ, Կոմիտեն սահմանում է որոշ բացառություններ, երբ կոնկրետ իրավունքներ վերապահվում են բացառապես որևէ պետության քաղաքացի հանդիսացող անձանց: Այսպես, ՔՔԻՄԴ-ի 25-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները (պետական գործերը վարելուն մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունք, պետական ծառայության անցնելու իրավունք) վերապահված են բացառապես տվյալ պետության քաղաքացի հանդիսացող անձանց:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը ամրագրում է իրավունքներ, որոնք տարածվում են բոլորի նկատմամբ՝ անկախ քաղաքացիությունից: 6-րդ հոդվածը յուրաքանչյուր անձի երաշխավորում է աշխատանքի իրավունքը: 7-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը: 8-րդ հոդվածով ապահովվում է յուրաքանչյուրի՝ արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքը, իսկ 9-րդ հոդվածը յուրաքանչյուրին երաշխավորում է սոցիալական ապահովության և ապահովագրության իրավունք: 11-րդ հոդվածով ճանաչվում են յուրաքանչյուրի բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի և բնակարանի, և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքները: 12-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը: Եվ վերջապես 13-րդ հոդվածով ամրագրվում է յուրաքանչյուրի կրթության, իսկ 15-րդ հոդվածը

39 Տե՛ս նույն տեղում, 2-րդ մաս

40 Տե՛ս նույն տեղում

ամրագրում է յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքները:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը նույնպես նախատեսում է նորմեր, որոնք արգելում են քաղաքացիության հիմքով խտրականությունը: 2-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

«Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն Դաշնագրով հռչակված իրավունքները կիրականացվեն առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:»⁴¹

Միավորված ազգերի կազմակերպության Հռչակագիրն այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են, (1985 թ. Հռչակագիր)

1985 թվականի դեկտեմբերի 13-ին Գլխավոր ասամբլեան ընդունեց Հռչակագիր այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են⁴²: Այս Հռչակագիրն ընդունվել է քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ կատարված մի ուսումնասիրության արդյունքում, որն ամփոփվել է 1976 թվականին Ենթա-կոմիտեի կողմից⁴³: Հռչակագիրը վերաբերում է բոլոր անձանց, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացին որտեղ գտնվում են:⁴⁴ Հռչակագիրը կոչ է անում հարգել քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները, ներառյալ կյանքի իրավունքը, անձնական կյանքի իրավունքը, դատարանների և տրիբունալների առաջ հավասարության իրավունքը, արտահայտվելու և կրոնի ազատությունը և լեզվի, մշակույթի և

41 Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 2-րդ հոդվածի 2-րդ կետ

42 Միավորված ազգերի կազմակերպություն, Գլխավոր ասամբլեա, Հռչակագիր այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են, UN Doc. A/RES/40/144 (1985)

43 Տե՛ս Բարոնես Բլես, «Այն անձանց մարդու իրավունքները, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են, Հռչակագրի կիրառման հետ կապված խնդիրները, հստակականության արգելման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերով ենթակոմիտե, UN Doc. E/CN.4/Sub.2/392 (1977)

44 Միավորված ազգերի կազմակերպություն, Գլխավոր ասամբլեա, Հռչակագիր այն անձանց մարդու իրավունքների մասին, ովքեր չեն հանդիսանում այն պետության քաղաքացի որտեղ ապրում են, UN Doc. A/RES/40/144, (1985), հոդված 1

ավանդույթների պահպանումը⁴⁵: Ավելին, այն նաև ամրագրում է աշխատանքի անվտանգ և հիգիենիկ պայմանների իրավունք, ինչպես նաև բժշկական օգնության, սոցիալական ապահովության և կրթության իրավունքը⁴⁶: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այս Հռչակագրի դրույթները ներառված են 1986 թվականի ՄԻԿ-ի *Ընդհանուր Մեկնաբանություն 15-ում*:

Այն անձիք, ովքեր չեն հանդիսանում տվյալ պետության քաղաքացի, որտեղ ապրում են, հիմնականում բաժանվում են մի քանի կատեգորիաների, այն է՝ արտագնա աշխատողներ, փախստականներ, փաստաթուղթ ունեցող և առանց համապատասխան փաստաթղթի տվյալ երկրում ապրող օտարերկրացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձիք: Այս կատեգորիաներից յուրաքանչյուրի տակ ընկնող անձիք պաշտպանվում են 1985 թվականի Հռչակագրով: 1-ին հոդվածը տալիս է «օտարերկրացի» հասկացության սահմանումը, համաձայն որի օտարերկրացի է համարվում «ցանկացած մարդ, ով գտնվում է կոնկրետ պետությունում և չի հանդիսանում այդ պետության քաղաքացի»: 5-րդ հոդվածի 1-ին կետը որոշակի իրավունքներ է սահմանում օտարերկրացիների համար՝ առանց կոնկրետ կատեգորիաների առանձնացման:

Արժանի է հիշատակման այն փաստը, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի (e) ենթակետով պետություններին իրավունք է վերապահվում կարգավորումներ սահմանել օտարերկրացիների համար՝ օտարերկրացիների արտահայտվելու, մտքի, խղճի և կրոնի ազատությունը սահմանափակելու միջոցով, ինչը ենթակա է սահմանափակման «միայն օրենքով նախատեսված կարգով և անհրաժեշտ է հասարակության անվտանգության, անկարգությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու համար»: Հետևաբար, եթե պետությունը որոշի որոշակի կարգավորումներ սահմանել փաստաթուղթ ունեցող և առանց համապատասխան փաստաթղթերի այդ երկրում ապրող օտարերկրացիների միջև՝ ի շահ հասարակության անվտանգության, ապա նման կարգավորումը չի արգելվի այս Հռչակագրով:

45 Տե՛ս նույն տեղում, հոդված 5

46 Տե՛ս նույն տեղում, հոդված 8

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի⁴⁷ 5-րդ հոդվածը, որի վերնագիրն է «Սույն կոնվենցիայից դուրս տրամադրվող իրավունքները», սահմանում է.

«Սույն կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում այն իրավունքներին և արտոնություններին, որոնք պայմանավորվող պետությունը փախստականներին տրամադրում է սույն կոնվենցիայից դուրս:»⁴⁸

բ) Որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, ներառյալ դատարան և այլ համապատասխան վարչական մարմիններ ազատորեն դիմելու իրավունքի իրականացումը

ՄԻՅՅ-ի, ԶԲԻՄԴ-ի և Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի համաձայն փախստականներին երաշխավորվում է իրենց նկատմամբ վերաբերմունքի այնպիսի նվազագույն ստանդարտներ, որոնք կիրառելի են ցանկացած այլ անձի նկատմամբ:

Այդ իրավունքները ներառում են նաև որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, ներառյալ դատարաններ և այլ վարչական մարմինների ազատորեն դիմելու իրավունքի իրականացումը: Փախստականների՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը հիմնարար իրավունքներից մեկն է, որով նրանց խախտված իրավունքներն ու ազատությունները հավասարապես պաշտպանվելու համար ամրագրվում է իրական երաշխիք: Այս իրավունքը նպատակ ունի ապահովել, որ փախստականները, ինչպես որ ցանկացած այլ անձ, ներառյալ կոնկրետ պետության քաղաքացի հանդիսացող անձիք, ունենան հավասար իրավունքներ ներպետական դատարաններ և այլ որոշում կայացնող կամ վեճեր լուծող մարմիններ դիմելու առումով: Սա նաև երաշխիք է դատական կամ այլ մարմիններում, որոնք օժտված են դատական իշխանություն իրականացնելու լիազորությամբ, ինչպես նաև վարչական և այլ որոշում կայացնող մարմիններում փախստականների կոնկրետ խնդիրների արդարացի լուծման համար:

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 16-րդ հոդվածը, որի վերնագիրն է «Դատարան դիմելու իրավունքը», սահմանում է.

⁴⁷ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, ըդրված 1951 թվականի հունիսի 28-ին, ուժի մեջ է մտել 1954 թվականի ապրիլի 22-ին 43-րդ հոդվածի համաձայն

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, հոդված 5

«1. Յուրաքանչյուր փախստական իրավունք ունի ազատորեն դիմելու բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում գտնվող դատարաններին:

2. Այն Պայմանավորվող պետությունում, որտեղ փախստականն ունի իր սովորական բնակության վայրը, դատարան դիմելու հետ կապված հարցերում նա օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները, ներառյալ իրավաբանական օգնությունն ու ազատումը *cautio judicatum solvi*-ից:

3. 2-րդ կետում նշված հարցերով փախստականն իր սովորական բնակության երկրից դուրս օգտվում է իր սովորական բնակության երկրի քաղաքացիներին հատկացվող վերաբերմունքից:»⁴⁹

Փախստականներն, ում նվազագույն կարիքները, իրավունքներն ու ազատությունները, ինչպես օրինակ ազատության և անձնական անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքները, չեն պաշտպանվում իրենց մշտական բնակության երկրում, ընդունող պետությունում պետք է արժանանան մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, այդ թվում Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի պահանջներին համապատասխան վերաբերմունքի: Ե՛վ փախստականներին ընդունող պետությունը և՛ նրանց նախկին մշտական բնակության երկիրը որոշակի պարտավորություններ ունեն առ այն, որ փախստականներն արդյունավետորեն իրականացնեն իրենց՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքն, ինչպես նաև այլ իրավունքներ ու ազատություններ:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան, իր 428 (V) Բանաձևում կոչ է անում կառավարություններին.

«(f) փախստականներին տրամադրել ճամփորդական և այլ համապատասխան փաստաթղթեր, մասնավորապես այն փաստաթղթերը, որոնք կօգնեն նրանց տեղաշարժմանը, և որոնք, որպես կանոն, պետական մարմինների կողմից կտրամադրվեին ցանկացած այլ օտարերկրացու,

(g) թույլատրել փախստականներին տեղափոխելու իրենց ունեցվածքը, մասնավորապես նրանց տեղաշարժման համար անհրաժեշտ իրերը ...».⁵⁰

49 Տե՛ս նույն տեղում, հոդված 16

Պետությունների պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ փախստականների կարիքները հոգալու և նրանց իրավունքներն արդյունավետորեն պաշտպանելու հարցում շատ է կարևորվում փախստականներին ընդունող պետության և փախստականների նախկին մշտական բնակության երկրի միջև համագործակցությունը: Կարևորվում է նաև այդ պետությունների գործակցությունը ՄԱԿ-ի ՓՉԳՅ-ի հետ:

Փախստականների՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի, ներառյալ դատարաններ և որոշում կայացնող այլ մարմիններ ազատորեն դիմելու իրավունքի իրականացումը շատ հաճախ կախված է որոշ փաստաթղթերի և տեղեկությունների առկայությունից: Սա պայմանավորված է այն փաստով, որ փախստականները, շատ հաճախ ստիպված են լինում լքել իրենց տներն առանց իրենց հետ վերցնելու անձը հաստատող որևէ փաստաթուղթ, այլ կարևոր փաստաթղթեր և նույնիսկ հագուստ: Հենց այստեղ է, որ առավել կարևորվում է համագործակցությունը փախստականին ընդունող պետության և փախստականի նախկին մշտական բնակության երկրի միջև:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կոմպլիմենտար բնույթ ունեցող ծրագրերի և տեղեկությունների ու տվյալների փոխանակումն իրականացվում է պետությունների միջև համագործակցության արդյունքում, այդ թվում միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների օժանդակությամբ: Օրինակ Բալկաններում փախստականների իրավունքների վերականգնմանն աջակցել է նաև Միջազգային իրավական ալիանսի (ՄԻԱ) Անդրսահմանային ցանցը⁵¹, որը իրավաբանների և այլ մասնագետների ցանց է, ովքեր փախստականներին օգնում են ձեռք բերելու իրենց փաստաթղթերը: Ըստ ՄԻԱ-ի, առավել քան 50 գործով կազմակերպությունն աջակցել է փախստականներին ձեռք բերել իրենց փաստաթղթերը, որի արդյունքում նրանք կարողացել են դատարան դիմել փոխհատուցում ստանալու համար, վարկ և կան էլ թոշակ ստանալու համար դիմում են ներկայացրել⁵² (այդ 50 գործերին կարելի է ծանոթանալ ՄԻԱ-ի կայքում—URL: <http://www.intall.org/HTML/impact50cases.htm>):

50 Միավորված ազգերի կազմակերպություն, Գլխավոր ասամբլեա, Բանաձև 428 (V) Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին, ընդունվել է 1950 թվականի դեկտեմբերի 14-ին հինգերորդ նստաշրջանում
URI: <http://daccessdds.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/060/26/IMG/NR006026.pdf?OpenElement>

51 Միջազգային իրավական Ալիանսը միջազգային, անկախ հիմնադրամ է: Հիմնադրվել է 1996 թվականին Նիդեռլանդներում

52 Միջազգային իրավական Ալիանս, "Integration of refugees in SCG: original Croatian documents are needed". URL: <http://www.intall.org/HTML/impact50cases.htm>

Ինչ վերաբերում է նշված պետությունների պետական մարմինների միջև համագործակցության փորձին, ապա հատկանշական է Խորվաթիայի օրինակը: Խորվաթիայի Հանրային աշխատանքների, շինարարության և վերակառուցման հարցերի նախարարության «Տեղահանվածների և փախստականների վերադարձը Խորվաթիա 2000 թվականից մինչև 2003 թվականը ընկած ժամանակահատվածում. գույքային իրավունքների և բնակարանի վերականգնումը և վերջիններիս վերակառուցումը» թեմայով հաշվետվությունը վկայում է այն մասին, որ Բոսնիայում և Հերցեգովինայում գույքը ժամանակավորապես օգտագործողների մասին տեղեկությունների փոխանակումն սկսվել է դեռևս 2001 թվականից: Այդ տեղեկությունների և տվյալների փոխանակումն հնարավոր է դարձել Բոսնիայի և Հերցեգովինայի Մարդու իրավունքների և փախստականների հարցերի Նախարարության և այլ միջազգային կազմակերպությունների ու Բոսնիայում աշխատող դոնորների համագործակցության արդյունքում⁵³:

ՄԱՍ III. ՎԵՐՋԱԲԱՆ

Այս վերլուծությունում յուրաքանչյուրի և, մասնավորապես, փախստականի՝ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքի իրականացման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բոլոր մարդկանց, այդ թվում փախստականների համար, պետք է ապահովել մարդու իրավունքներից, ներառյալ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքից առանց որևէ խտրականության օգտվելու հավասար իրավունք:

Սակայն, հաշվի առնելով փախստականների հարցի առանձնահատկությունը և այն փաստը, որ շատ հաճախ պետությունների ներսում կամ մինյանց միջև ծագած քաղաքական խնդիրների պատճառով վտանգվում է փախստականների որոշ իրավունքների արդյունավետ իրականացումը, ինչպես օրինակ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, ներառյալ դատարաններ կամ տրիբունալներ, ինչպես նաև այլ որոշում կայացնող մարմիններ ազատորեն դիմելու իրավունքը, փախստականներին ընդունող պետության և փախստականների նախկին մշտական բնակության երկրի միջև համագործակցությունն հնարավոր դարձնելը դառնում է արտակարգ կարևորության խնդիր: Նման

53 «Տեղահանվածների և փախստականների վերադարձը Խորվաթիա 2000 թվականից մինչև 2003 թվականը ընկած ժամանակահատվածում. գույքային իրավունքների ու բնակարանի վերականգնումն ու վերջիններիս վերակառուցումը» թեմայով հաշվետվություն, Խորվաթիայի Հանրային աշխատաքանի, շինարարության և վերակառուցման հարցերի Նախարարություն, Խորվաթիա, Ջագրեբ, 2003 թ. հոկտեմբեր, 7-րդ մաս

URL: <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/UNTC/UNPAN015746.pdf>

համագործակցության, այդ թվում ՄԱԿ-ի ՓՀԳՀ-ի հետ համագործակցության կարևորությունը դեռևս ընդգծվել է 1950 թվականին Գլխավոր ասամբլեայի կողմից՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերով ամրագրված ցանկացած մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման հիմնական երաշխիքներից մեկը:

Ավելին, ներկայումս մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ և փորձագետների խմբեր շարունակական աշխատանքներ են տանում փախստականների իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմների բարելավման ուղղությամբ: Սա գլոբալ անհանգստության խնդիր է և այդ առումով պետությունների կամքի դրսևորումը, ի թիվս այլ ֆինանսական, տնտեսական և մարդասիրական խնդիրների, կարևոր դեր է խաղում փախստականների խնդիրների լուծման հարցում: